«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ՆՄԿՈՒ հաստատություններում համապատասխան մասնագետով համալրված մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների ստեղծում» մասին

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 09060139-44

ք. Երևան «04» «փետրվար» 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև «Պատվիրատու») մի կողմից, «Սպիտակի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս քոլեջի տնօրենի պաշտոնակատար Մ. Բաղրամյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Կատարող») մյուս կողմից, հիմք ընդունելով հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն (այսուհետ՝ որոշում), պահանջները, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն պարտավորվում է ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի 09.06.01.«39. ՆՄԿՈՒ հաստատություններում համապատասխան մասնագետով համալրված մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների ստեղծում» ծրագրի իրականացման համար սույն պայմանագրի 2.1. կետում նշված միջոցները հատկացնել Կատարողին, իսկ Կատարողը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով կատարված Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 972 000 (ինը հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն համաձայն Կատարողի կողմից ներկայացված հայտի կատարում է վճարում անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1.Պատվիրատուն ցանկացած ժամանակ իրավունք ունի ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.2. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.4. Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.5. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.6. Կատարողի կողմից ստացված և սահմանված ժամկետներում չօգտագործված միջոցները վերադարձվում է Պատվիրատուին:

3.7. Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.8 Կատարողը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնել հաշվետվություններ համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008 թվականի փետրվարի 4-ի թիվ 80-Ն հրամանի և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններին առընչվող այլ իրավական ակտերի:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պատվիրատունսույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

5.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախարարություն	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	«Սպիտակի պետական քոլեջ» ՊՈԱԿ
ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	ք.Սպիտակ, Ուզբեկական թաղ.
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900011022671	Հ/Հ 900248000300
Նախարարության գլխավոր քարտուղար՝	տնօրեն ---------- Ս. Բաղրամյան
---------- Ն. Հարությունյան	Կ.Տ.
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	